ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

<<ԷԱՃԱՊՁԲ-2019/7-7-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

_28_ _փետրվարի_ _2019թ._
ժամը _11[00]_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Հ. Մանուկյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Վ. Մամիկոնյան, Ա. Քոսակյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պ. Գաբրելյան**

1. Տվյալներ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին

1.1 <<ԷԱՃԱՊՁԲ-2019/7-7-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը (կցվում է), առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը (կցվում է), հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները (կցվում է), հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների կողմից ներկայացրած՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատման արդյունքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ՝ առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- <<Հիդրո Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ներկայացված չէ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- <<Հիդրո Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր սյունակում նշված <<Այն չափաբաժիններում, որտեղ գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, կիրառական է <<կամ համարժեք>> բառերը>> նախադասությունը ավելորդ է:
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն <<Հիդրո Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները գերազանցում են <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով սահմանված շեմը:
- <<Եվրոֆուրնիտուրա>> ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ներկայացված չէ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Հ. Մանուկյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Վ. Մամիկոնյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Քոսակյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Պ. Գաբրելյան**
(ստորագրությունը)